ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ ԱՅՑԵԼԵՑ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ ԳԱԳԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ

Նոյեմբերի 9-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ՀՀ Սահմանադրական դատարանի անդամներին՝ դատարանի նախագահ Գագիկ Հարությունյանի գլխավորությամբ:

Շնորհավորելով Վեհափառ Հայրապետին, պրն. Հարությունյանը համոզվածություն հայտնեց, որ Նորին Սրբության ընկերությամբ Հայ Առաքելական Եկեղեցին կշարունակի կատարել իր սրբազան առաքելությունը: Նա միաժամանակ հավաստեց Սահմանադրական դատարանի՝ որպես օրենքի մարմնի աջակցությունը Վեհափառ Հայրապետին ու Եկեղեցուն:

Հանդիպման ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսը հյուրերին ներկայացրեց Հայ Եկեղեցու առջև ծառացած ներկայիս խնդիրներն ու հրամայականները: «Եկեղեցին վերադարձնել հայ տուն, հայ օջախ, հայ հոգուց ներս.- սա է մեր Եկեղեցու ներկայիս առաքելությունը»,- ասաց Վեհափառ Հայրապետը՝ վստահությամբ, որ այդ առաքելության մեջ Մայր Աթոռն ունենալու է Հայ Առաքելական Եկեղեցու բոլոր նվիրապետական Աթոռների աջակցությունն ու զորակցությունը:

ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ